

բաներու կը պորձածուի . վասն զի բու-
նը օղակ օղակ ըլլալով մէջի ծուծը կը
հանեն ու ջրի խողովակներ կը շինեն , և
կամ թէ դէպ 'ի երկայնքին կտրելով՝
տանիքներուն ջուրը հաւաքելու կը դոր-
ծածեն . և կ'ըսեն թէ ասիկայ հողուն
մէջ թաղուելով երկաթէն աւելի կը
կարծրանայ :

Իսպանական առաջին հատորին մէջ
դիրք ենք այս ծառիս պատկերը , տես
հոն :

ԱՄՏԵՂԱԲԱՆԻԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲ

Նոյն գիտութիւն :

ԱՄՍՈՅՍ մէկին , ըստ նոր սօմարի , փեղեքսէն
անուանով աստեղաբաշխը Ալգոնա քաղաքէն գիսա-
ւոր մը տեսաւ , որ Վիշապ ըսուած շրջաբնէն հա-
մաստեղութեան վրայ էր , և գրեթէ 19^ր 28^ր ու-
ղիւ էր և 71° 10' հիւսիսային խոտորումն ունէր ,
և իրեն ժամական շարժումը հասցն թէ — 2' դէպ
'ի ուղիւ էր — 20' դէպ 'ի խոտորումն էր :

Քոլլա փարմայի դիտարանին երևելի աստեղա-
բաշխը ամսոյս տասնին վնոյնը դիտելով ժամը 10ին
Վիշապ համաստեղութեան (τ) դա- ու (υ) իփօիւն
աստեղաց մէջտեղուանը գտաւ , գրեթէ 281°
ուղիւ էր և 72° 45' խոտորման վրայ :

Այս գիտաւորս շատ պզտիկ է և լոյսը նուազ ըլ-
լալուն աչքով չերևնար այլ դիտակով միայն , և
վրան գլուխ չտեսնուիր բայց միայն կըր միգամա-
ծի ձև ունի կեդրոնը աւելի լուսաւոր : Երկրորդ
իրիկունն ալ գիտելով նոյնպէս տեսնուեալ է . բայց
այս տարբերութեամբ որ երբեմն երբեմն վրան
աստղի պէս փայլուն կէտ մը տեսնուեալ է որ գու-
ցէ դիտաւորին գլուխն ըլլայ կամ թէ ուրիշ պզտի
աստղ մը միգամածին տակէն կ'երևնայ :

Նոյն փայլում :

Երկուսն էրեսը հրատ ու լուսնթագ ըսուած
մոլորակաց պարունակներուն մէջ ինկած միջոցը
տարի տարուան վրայ հետզհետէ նոր նոր մանր
մոլորակներով կը զարգարուի :

Ասկէ առաջ աստեղաբաշխք տեսնելով որ ուրիշ
մոլորակները մէկ կանոնաւոր յառաջատուութեամբ
մը մէկմէկէ կը հեռանան , և միայն հրատ ու լու-
սնթագ մոլորակները իրարմէ այս կանոնաւոր յա-
ռաջատուութիւնը չեն պահեր , ըսին թէ բնութիւնը
ամէն բանի մէջ միշտ պարզութիւն մը , կարգ մը ու
ներդաշնակութիւն մը կը պահէ , ուստի չի կրնար

ըլլալ որ հոս աշնոյն կարգը պահած ըլլայ . ուրեմն
պետք է որ ըսին այս երկու մոլորակաց մէջտեղը
ուրիշ մոլորակ մըն ալ ըլլայ : Այս ենթադրու-
թեամբ երկրնքին նոյն միջոցը մէջերին բաժնե-
ցին , և դիտակին դէպ 'ի հոն ուղղած՝ վրան շատ
չանցաւ մէյմըն ալ փոխանակ մէկ մոլորակի չորս
մանր մոլորակ գտան հոն իրարու մօտ պարունակ-
ներով , որով իրենց ենթադրութիւնը ստուգուե-
ցաւ և աշխատութիւննին ալ սլակուեցաւ : Այս
չորս մոլորակները դարուս սկիզբները գտուեցան
հետզհետէ , և են իրենց գտուելուն կարգաւ՝ Դե-
մարէ 1801ին , Պալլաս 1802ին , Հերա 1804ին ,
Վեստա 1807ին : Այս աստեղէն ինչուան 1845 առ-
աւելաբաշխք երկրնքին նոյն միջոցին վրայ ուրիշ
մասնաւորութիւն մը չէին գիտած , բայց այն տա-
րիէն սկսեալ ինչուան այս օրս ուրիշ եօթը մանր
մոլորակ ալ գտուեցաւ առաջիններուն մօտ պա-
րունակներով և են իրենց գտուելուն կարգաւ՝
Աստրէա 1845 գեկտ . 8ին , Հերէ 1847 յուլիսի
1ին , Իրիս կամ Ծիածան 1847 օգոստ . 13ին ,
Փլորա 1847 հոկտ . 18ին , Մեդիս 1848 ապրիլ
26ին , Իգէա պուրպոնեան 1849 ապրիլ 12ին , իսկ
եօթներորդը աս օրերս գտաւ Անիպալ տէ Կաս-
պարիս անուանով Նափոլիի աստեղաբաշխը , որ Ի-
գէան ալ անցեալ տարի ինքը գտեր էր : Արդէն
ամսոյս 6էն 'ի վեր կասկած մ'աւանդեցէր է այս նոր
մոլորակին գոյութեանը վրայ , բայց հաստատու-
թեան աստղերը դիտելու զբաղած ըլլալով ուշա-
դրութիւն չէր դրած : Բայց վերջապէս աստեղեր
է և ամսոյս 11ին , 12ին , 13ին հետեւեալ դիտո-
ղութիւններն ըրեր է

1850 մայիս

Միջին ժամ հասարակ	Ուղ. եւ տեղեկաց	Խոտորմ. տեղեկաց
11 12 ^ր 51 ^ր 35 ^ր , 1	230° 34' 33" , 2	— 10° 35' 12" , 9
12 11 42 2 , 8	230 2 28 , 6	— 10 31 38 , 9
13 12 6 33 , 6	239 35 41 , 2	— 10 28 33 , 8

Այս նոր մոլորակս , իրեն լուսոյն նայելով ,
ցերորդ կարգի աստեղաց մեծութիւնն ունի , և
հիմայ արեւուն ընդգիծակաց է : Աստեղաբաշխը
կուղէ ասոր անունը Պարսէն-դէ գնել 'ի պատիւ
Ճոն Հերշելի , որ ասկէ առաջինին գնելու խոր-
հուրդ տուեր էր :

Ռէոն թագաւոր Սիւակուայ՝ կամեցաւ ըն-
ծայել ոսկի պսակ 'ի մեհեն մի . կշռեաց զոսկին
և ետ ցոսկերիչն , և ոսկերիչն շորթեալ յոսկոյն
կշիռն արծաթ խառնեաց և յայտնեցաւ իրն . և
թագաւորն աղաչեաց զԱռքամիդիս իմանալ որքան
յոսկոյն առաւ . իսկ նորա տուեալ զհասարակ կը-
շիռ ոսկոյն՝ էարկ յաման ջրալի , և հեղեալ ջրոյն՝
էառ զոսկին , և զհեղեալն չափեաց . և զնոյն կշիռ
արծաթոյ՝ առեալ էարկ 'ի նոյն աման լի ջրով , և
առեալ զարծաթն՝ զհեղեալն չափեաց . և զգու-
շացաւ որքան առաւել հեղաւ ջուրն յարծաթոյն
արկելոյ . յայնժամ զայն զնոյն ետ 'ի ջուր և նովին
աւրինակաւն իջոյց զարծաթն զնմին կշռոյն , և 'ի
պակասմանէ հեղմանն վերադին խորհեալ ասաց
որքան առաւ ոսկին :